# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓԱՌՔԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԴԵՐԱՍԱՆԸ

## ԼՐԱՑԱՎ ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԸ



Իմ տեսած այն մեծատաղանդ արտիստներից է Վահրամ Փափազյանը, որին բեմի վրա տեսնելով պարծանքով եմ լցվում, որ այդ աշխարհի հնագույն թատերական կուլտուրա ունեցող ժողովուրդներից է հայ ժողովուրդը:

Հայ կուլտուրայի այն փայլուն գործիչներից է Վահրամը, որի տաղանդը իրար է ձուլել ազգայինը և համաշխարհայինը, այն դերասանների փայլուն պլեադայից, որի շնորհիվ Շեքսպիրը դարձել է ամեն մի կուլտուրական հայի համար հոգեհարազատ հանճար, ու որի շնորհիվ էլ հայ ժողովուրդը աշխարհի հեռավոր երկրներում ճանաչված է, որպես ամենաարտիստական ժողովուրդներից մեկը:

*Մարտիրոս ՍԱՐՅԱՆ*

Հայ թատրոնի խոշորագույն վարպետ Վահրամ Փափազյանը ծնվել է 1888 թվականի հունվարի 6-ին, Կոստանդնուպոլսի Բերա թաղամասում: Նա ստացել է հիմնավոր կրթություն, լեզուների, մշակույթների, հատկապես ուներ հայրենական մշակույթի բացառիկ իմացություն: Ավարտել էր Պոլսի Էսայան վարժարանը, ուսանել Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում, ապա 1908-1911 թվականներին սովորել Միլանի Գեղարվեստի ակադեմիայում ու այնտեղ շփումներ ունեցել իտալական հայտնի դերասաններ Է. Ցակկոնիի, Է. Նովելլիի, Է. Դուզեի հետ, որոնցից դասեր էր առել, նրանց թատերախմբերի հետ շրջագայել Իտալիայի քաղաքներում: Այդ շրջանում նա դաստիարակվել է որպես դասական խաղացանկի դերասան և պատրաստել իր հիմնական խաղացանկի դերակատարումները` Օթելլո, Ռոմեո, Համլետ, Կորրադո, ժամանակ առ ժամանակ հանդես գալով շրջիկ թատերախմբերում:

Նույն շրջանում էլ Վահրամ Փափազյանին վիճակվեց պոլսահայ թատրոնը վերստին շենացնելու գործը: Հենց Պոլսում էլ 1908 թվականին նա առաջին անգամ հանդես եկավ Օթելլոյի դերով, որը բախտորոշ եղավ իր ստեղծագործական կյանքում` դերը կապվեց դերասանին ու նրա հետ ապրեց ավելի քան հինգ տասնամյակ: "Օթելլոն, օհ, Օթելլոն կսիրեմ, որովհետև շատ մեծ նմանություններ գտած եմ անոր և իմ նկարագրիս, կրքոտություններուս ու հոգիիս մեջ",- ասել է դերասանը:

Հայ մամուլը Վահրամ Փափազյանին գնահատեց որպես Պետրոս Ադամյանի ուղղությունը նոր աստիճանի բարձրացնող դերասան:

"Հայ դրամատիկը" Փափազյանի գլխավորությամբ շրջել է Թրակիա, Մակեդոնիա, Ալբանիա և այլուր: Սակայն երիտասարդ Փափազյանին տանջում էր ուրիշ մտահոգություն. "Հրաժարվել մինչև այդ վարած անհայրենիք գործունեությունից, և հեռավոր Կովկասը իր հայությամբ, թատրոնով, ազգային տոհմիկ կենցաղով, զրականությամբ ու լեզվով, դարձավ իր բոլոր ձգտումների առանցքը":

Չգտումը դառնում է իրականություն: Փափազյանը հրավեր է ստանում Թիֆլիսի հայ դրամատիկական ընկերությունից, և նա թողնում է ծննդավայրը` համոզված, որ փրկում է իր արտիստական ապագան, և իր գործունեության հիմնական միջավայրը դարձնում է Անդրկովկասը:

Վահրամ Փափազյանը այն դերասաններից էր, որ բեմից ու դերից դուրս էլ գեղագիտորեն հրապուրիչ են, ինչպես ինքը կասեր` առինքնող: Գեղեցիկ ու հմայիչ էր, վայելչակազմ, արտահայտիչ, նաև կիրթ, ուներ վսեմ շարժուձև: Այս բացառիկ տվյալների համեմատ բացառիկ էին նաև նրա դերասանական տաղանդը, մտքի ճկունությունը, իմացությունը, ինտելեկտի հարստությունը: Իր ամբողջ նկարագրով, նաև ճակատագրով արտասովոր դերասանը ունեցավ արտասովոր կերպարներ անձնավորելու նախասիրություն` Օթելլո, Համլետ, Քին, Դոն-Ժուան, Կորրադո, Ուրիել Ակոստա, Արբենին...: Իր միջավայրում մշտապես աչքի ընկնող, պերճաշուք ու հպարտ` նա սիրեց ուժեղ և հպարտ հերոսների և թույլ, անզոր բնավորությունների հանդեպ ունեցավ նույն արհամարհանքը, ինչ իր հերոսները:

Փափազյանը հայ բեմի ճշմարիտ և լավագույն ողբերգակն էր: Նրա ճշմարտապես հարազատ տարերքը ողբերգությունն էր, բարձր տրագեդիան, մեծ կրքերի փոթորկաշունչ աշխարհը, որոնց գեղարվեստական մարմնավորման համար նրան տրված էր ամեն բան` լիաբուռն ու շռայլ: Դա էր նրա իսկական տարերքը, նրա շռայլ տաղանդի միակ հարազատ ասպարեզը: Ինչպես Ռուբեն Զարյանն է նկատել. "Շեքսպիրի ըմբռնման առաջին խոսքը սովետական թատրոնում պատկանում է Փափազյանին: Այդ նա է, որ առաջինը լինելով, փորձ է անում հակադրվել Օթելլոյի կերպարի անցյալ լուսաբանություններին: Եվ հակադրվելով, ստեղծագործական խիզախ քայլ է անում, ողբերգական կերպարը հագեցնում է հասարակականպատմական ըմբռնումով, գտնում է այն, ինչը մեծ դրամատուրգին ժամանակակից է դարձնում և այդպիսով պատմականը դարձնում արդիական":

1913 - 1917 թվականներին Վահրամ Փափազյանը հյուրախաղերով է եկել Թիֆլիսի և Բաքվի հայ թատերախմբերում, խաղացանկը հարստացրել նոր դերակատարումներով. Արեդա, Օհան, Գուրգեն (Շանթի "Հին աստվածներ", "Կայսր"), Ժիրայր (Սունդուկյանի "Անհահ Ժիրայր"), Թոմաս (Դեմիրճյանի "Դատաստան"), Ռուստամ, Սեյրան (Շիրվանզադեի "Նամուս"): 1920 - 1922 թվականներին խաղացել է Կ. Պոլսում: 1922-ին եկել է Հայաստան և մի շրջան աշխատել Երևանի պետթատրոնում: Ապա հանդես է եկել Թիֆլիսի և Բաքվի հայկական թատրոններում: 1926 -1927 թվականներին եղել է Թիֆլիսի Հայ դրամատիկական թատրոնի գլխավոր ռեժիսոր: 1928-ին մեկնել է Մոսկվա, Փոքր թատրոնում հանդես է եկել Օթելլոյի դերով: 1929-1931 թվականներին աշխատել է Լենինգրադի "Պասսաժ" թատրոնում: 1932-ին մեկնել է արտասահման, ֆրանսերենով խաղացել է Օթելլո, Համլետ, Դոն-Ժուան: 1941 թվականին Օթելլոյի դերով հանդես է եկել Մոսկվայի Գորկու անվան Գեղարվեստական թատրոնի մասնաճյուղում, ապա խաղացել Լենինգրադի Մեծ դրամատիկական թատրոնում: 1942 - 1944 թվականներին եղել է Լենինգրադի Պուշկինի անվան թատրոնի դերասան: 1946 -1954 թվականներին իր կազմած ռուսական թատերախմբով ելույթներ է ունեցել Ռուսաստանի, Ուկրաինայի, Միջին Ասիայի ու Անդրկովկասի հանրապետությունների բեմերում: 1954 թվականին վերջնականապես հաստատվել է Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոնում:

1956 թվականին Վահրամ Փափազյանը Օթելլոյի դերակատարումով մասնակցել է Հայ արվեստի և գրականության մոսկովյան երկրորդ տասնօրյակին: Նույն թվականին արժանացել է ՍՍՀՄ Ժողովրդական արտիստի կոչման:

Վահրամ Փափազյանը մեծատաղանդ դերասան լինելուց բացի, եղավ նաև նույնքան տաղանդավոր արձակագիր, տեսաբան ու վերլուծող, գրական ինքնատիպ ոճի խոշոր անհատականություն: Նա թողել է իր ճշանակությամբ իրոք վիթխարի գրականություն` սկսած "Սրտի պարտքից" մինչև "Լիր Արքան": Այդ են հաստատում նրա լույս ընծայած "Հետադարձ հայացք", "Իմ Օթելլոն", "Համլետն ինչպես տեսա" և այլ գրական-թատերական երկասիրությունները, որոնք լույս են տեսել տարբեր հրատարակություններով, իսկ 1983 թվականին` հինգ մեծածավալ հատորներում վետեղված: Ինչպես էությամբ, այնպես էլ գրչով նա նվիրված էր շեքսպիրյան աշխարհին: Շեքսպիրյան գործերում նրա ունեցած խորաթափանցությունը նրան հասցրեց այնտեղ, որ անսահման խտացումների և ընդհանրացումների սկզբունքով գրեց հայ շեքսպիրագիտության համար կարևորագույն նշանակություն ունեցող վերհիշյալ աշխատությունները:

Սրանցում հեղինակը մեկը մյուսի հետևից մեր առջև բացեց հայտնի և անհայտ դռներ, որոնց հետևում Օթելլոյի, Համլետի և Լիրի կերպարներն ամբողջականացնող մեկնություններ են: Այս գրքերում նա շարունակել է այդ կերպարների վերապրումը բեմից դուրս, ավելի շատ պատմել է, քան մեկնաբանել, տուրք է տվել ռոմանտիկական դպրոցին, հեռացել իր խաղացածից, հայտնել նոր մտքեր` հարստացնելով այդ ամենը իր բազմակողմանի գիտելիքներով, համաշխարհային գրականության ու արվեստի իմացությամբ:

Իր վերջին դերը` Մեք Գրեգորը, Վիլյամ Սարոյանի "Իմ սիրտը լեռներում է" պիեսում Փափազյանը 1963 թվականին խաղացել է որպես կյանքի իրական վիճակ` իր հրաժեշտը բեմին:

Հայ մշակույթի մեծատաղանդ ներկայացուցիչ Վահրամ Փափազյանը մահացել է 1968 թվականին, Լենինգրադում, թաղված է Երևանում` Կոմիտասի այգու պանթեոնում:

Նա հայ թատրոնի այն նվիրական դեմքերից էր, որոնք առանձնահատուկ հմայք են տալիս այդ թատրոնին, և որոնց ստեղծագործական հսկայական վաստակը, որպես զանձ ու հարստություն դառնում է այլևս համաշխարհային թատրոնի անկապտելի սեփականությունը, միաժամանակ մնալով ազգային թատրոնի փառքն ու պարծանքը: Վահրամ Փափազյանը մի դերասան էր, որը թատերական մշակույթի մի ամբողջ դարաշրջան է ինքնին: Թատերական հայտնի գործիչ, ռուս մեծ դրամատուրգ և ռեժիսոր: Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոն էլ իր հերթին նույն միտքն է հաստատում. "Փափազյանը մեկն է դասական խաղացանկի այն սակավաթիվ ու սքանչելի կատարողներից, որոնք արժանի են համաշխարհային փառքի: Հմայիչ արտաքին, գեղեցիկ պլաստիկա, վարակող ավյունի բռնկումներ ու ավյուն ձայն. այսպես է պատկերանում ինձ Փափազյանի արտիստական անձնավորությունը",- գրել է Փափազյանի մեծանուն ժամանակակիցը: